

Ծովազարդ համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2011թ-ին կատարած աշխատանքների վերաբերյալ

2011թ-ին համայնքի ղեկավարը և աշխատակազմը իրենց աշխատանքները իրականացրել են համաձայն “Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրնքի և պետական իրավական այլ ակտերի:

Համայնքի բյուջեի սեփական եկամուտներ հավաքագրվել է 10036.7 հազար դրամ նախատեսված 12149.9 հազար դրամ կամ համայնքի բյուջեն սեփական եկամուտների մասով կատարվել է 82.6 տոկոսով: Հիմնական թերի գանձումները կատարվել են շինությունների գույքահարկի մասով:

Տարեսկզբի ազատ մնացորդ ունեցել ենք 6808.3 հազար դրամ: Այժմ ներկայացնենք ֆինանսական ծախսերը ըստ հոդվածների և կատարած աշխատանքների` ապարատի պահպանման ծախսեր 18830.1 հազար դրամ, այդ թվում ավտոբուսի պահպանման ծախսեր ներառյալ վարորդի աշխատավարձը 2087.0 հազար դրամ, որը տեղափոխում է դպրոցի աշակերտներին տնից դպրոց և դպրոցից տուն:

Մանկապարտեզի պահպանման ծախսեր 4000.0 հազար դրամ:

Հողերի ագրոքիմիական հետազոտության ծախսեր 100.0 հազար դրամ:

Արարողությունների համար սեղան-աթոռների ձեռքբերում 350.0 հազար դրամ:

Սոցիալական պաշտպանություն 2950.0 հազար դրամ, որից 1125.0 հազար դրամ միանվագ օգնություն անապահով 40 ընտանիքների, պատերազմի վետերաններին և զոհվածի այրիներին 80.0 հազար դրամ, 740.0 հազար դրամ նորածին երեխաների 37 մայրերին, 67 ուսանողի երթևեկության ճանապարհածախս 1005.0 հազար դրամ:

Ճանապարհային տնտեսության հոդվածով ծախսվել է 869.0 հազար դրամ` ձյան մաքրման և ճանապարհներին հարթեցման աշխատանքների համար:

2100.0 հազար դրամ համայնքի բյուջեի և 600.0 հազար դրամ “Կարիտաս”-ի միջոցներով կառուցվել է 1.1 կմ փողոցային լուսավորության ցանց ներառյալ նախագծանախահաշվային աշխատանքները:

Կատարվել է փողոցային լուսավորության նախկին ցանցի վերանորոգում 463.0 հազար դրամ արժեքով:

Կազմակերպվել են տոնական և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ /տարեմուտ,, մարտի 8, ապրիլի 24, մայիսի 9, սեպտեմբերի 21 և այլն/ որոնց անցկացման համար ծախսվել է 550.0 հազար դրամ:

Համայնքի գլխավոր հատակագծի կազմման աշխատանքների համար վճարվել է 6046.0 հազար դրամ:

Վճարվել է բնական գազի և էլ. էներգիայի արժեք 672.0 հազար դրամ:

“World Wision “ կազմակերպության կողմից կատարվել է մանկապարտեզի շենքի 1-ին հարկի, դահլիճի, խոհանոցի կապիտալ վերանորոգում 16000.0 հազար դրամ արժեքով:

“Արմենտել” բջջային օպերատորի միջոցներով կատարվել է մշակույթի տան ազբոշիֆերե ծածկի կեսի կապիտալ վերանորոգում:

“Սահակյանչին” տրեստի կողմից կատարվել է ներհամայնքային ճանապարհների որոշ մասի շեփնապատման և հարթեցման աշխատանքներ:

Ներկրվել և բախշվել է մոտ 10տ ցորենի և 1տ գարու սերմացու: Ինչպես նաև բերքահավաքի սեզոնին այլ համայնքներից ներգրավվել են կոմբայներ բերքահավաքը ժամանակին կատարելու համար:

Կազմակերպվել են գյուղատնտեսական թեմաներով սեմինար պարապմունքներ, ներգրավվելով ԳԱՄԿ-ի մասնագետներին:

Երեխայի առողջության կենտրոնում “Բարի հույս” կազմակերպության միջոցներով կազմակերպվել է կարի արտադրամաս և հաշմանդամ երեխաների ծնողներին ուսուցանվել է կարուձևի վարպետություններ:

Անհրաժեշտության դեպքում համայնքի բնակիչների անձնական հարցերով աջակցվել է մարզային և պետական կառույցներում ունեցած հարցերի լուծմանը: